ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 667-Ա/2 01.06.2020թ

«ԵՐԳՈՒՄ ԵՆ ՏԻԿՆԻԿՆԵՐԸ» ԵՎ «ՏԻԿՆԻԿՆԵՐԻ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ» ԱՌՑԱՆՑ ՀԱՂՈՐԴԱՇԱՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Երգում են տիկնիկները» և «Տիկնիկների կախարդական աշխարհում» առցանց հաղորդաշարերի իրականացման նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել «Երգում են տիկնիկները» և «Տիկնիկների կախարդական աշխարհում» առցանց հաղորդաշարերի իրականացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար (տող՝ «Աջակցություն այլ մշակութային միջոցառումների և ծրագրերի իրականացմանը») Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված գումարներից հատկացնել 2100.0 հազար (երկու միլիոն հարյուր հազար) դրամ՝ 2020 թվականի հունիսի 1-ից օգոստոսի 1-ը «Երգում են տիկնիկները» և «Տիկնիկների կախարդական աշխարհում» առցանց հաղորդաշարերի ծախսերն իրականացնելու համար:

3. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) գլխավոր քարտուղարի ստորագրմանը ներկայացնել սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը «Երևանի Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

4. Նախարարության ժամանակակից արվեստի և ֆինանսաբյուջետային վարչությունների պետերին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրի կատարման նկատմամբ հսկողություն, պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման, բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների ընդունման և պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների կազման և ստորագրման գործառույթները:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

Նախարար Ա. Հարությունյան

X _____

Հավելված

ՀՀ կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարի

1 հունիսի 2020 թ.

N 667-Ա/2 հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր

«Երգում են տիկնիկները» և «Տիկնիկների կախարդական աշխարհում» առցանց հաղորդաշարերի իրականացման

1	Կազմակերպության անվանում	«Երևանի Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Սայաթ Նովա 4
3	Ծրագրի անվանում	«Երգում են տիկնիկները» և «Տիկնիկների կախարդական աշխարհում» առցանց հաղորդաշարեր
3.1	Բովանդակություն	Տիկնիկային թատրոնը առաջարկում է առցանց երկու նախագիծ՝ տիկնիկային թատրոնի հանդիսատեսի հիմնական թիրախային խմբի համար: Միանալով կորոնավիրուսի կանխարգելման միջոցառումներին մենք ևս կարևոր ենք համարում տիկնիկային թատրոնի գործունեության ակտիվությունը առցանց հարթակում: Նախատեսում ենք իրականացնել 2 առցանց նախագիծ՝ 1. «Տիկնիկների կախարդական աշխարհում» - հաղորդումների շարքը նախատեսված դպրոցական տարիքի հանդիսատեսի համար: Այստեղ հանդիսատեսը կծանոթանա, ինչպես տիկնիկային դիմակների, ստվերների, թատրոնների զարգացմանն ու տեսակներին, այնպես էլ տիկնիկավարության տեխնիկական և գեղարվեստական գաղտնիքներին: Ծրագրի բովանդակությանը համաձայն՝ կներկայացվեն նաև տարբեր երկրների ավանդույթներն ու տիկնիկային կերպարները. 2. «Երգում են Տիկնիկները» - հաղորդումների շարք նախատեսված 1-10 տարեկան հանդիսատեսի համար: Այս տարիքային խումբը՝ ցավոք հայերեն լեզվով շատ քիչ ուսումնական նյութ և զբաղմունք ունի: Բացի դրանից շատ

		քիչ են հայերենով մանկական երգերը: Հաղորդաշարը տիկնիկների միջոցով երեխաներին կառաջարկի սովորել տիկնիկային թատրոնի մանկական երգերը: Դրա համար նրանց կօգնի նաև հաղորդաշարի ընթացքում ցուցադրվող երգերի տեքստը: Երեխաների հետ կապը կպահվի նաև երգից հետո տրվող առաջադրանքների միջոցով, որոնք միտում ունեն զարգացնելու երեխաների ստեղծագործական ունակությունները: Երեխաներին կառաջարկվի, ինչպես երգել ու նկարել, ապա նյութը ուղարկել թատրոնի էջ, այնպես էլ նկարել ամեն հաղորդման ժամանակ երգը կատարող հերոսներին: Հաղորդաշարները կցուցադրվեն թատրոնի էջում:
3.2	Նպատակ	Նախագածերը նպատակ ունեն, ինչպես ամրապնդելու հանդիսատեսի կապը թատրոնի հետ, որը հետագայում կնպաստի հանդիսատեսի հոսքին թատրոն այնպես էլ ունի կրթական մեծ նշանակություն: Նախագիծը հետապնդում է թատրոնի տեսակների և տիկնիկային թատրոնի առանձնահատկությունների մասին տեղեկությունների, դրանց առանձնահատկությունների բացահայտում: Առցանց հարթակում թատերական ակտիվության բարձրացում, տիկնիկային ժանրի հանդեպ հետաքրքրության բարձրացում: Կորոնավիրուսի կանխարգելման միջոցառումների ակտիվության բարձրացում հնարավորինս կրթական և հետաքրքիր նախագծերի իրականացման միջոցով:
3.3	Անցկացման ժամկետ	Նախատեսվում է 2020 թվականի հունիսի 1-ից օգոստոսի 1-ը, որից՝ 1. «Տիկնիկների կախարդական աշխարհում» - 8 հաղորդում, շաբաթական 1 հաղորդում, տևողությունը՝ 10 - 15 րոպե, 2. «Երգում են Տիկնիկները» - 10 հաղորդում, շաբաթական 2 հաղորդում, տևողությունը՝ 5 - 10 րոպե:
3.4	Անցկացման վայր	առցանց հարթակ

3.5	Ակնկալվող արդյունքներ	Էջը վերջին շրջանում բավականին ակտիվ է և մեր վերջին ներկայացումների ցուցադրումները և հեքիաթների ընթերցումները ունենում են 10.000-ից ավել դիտում: Նախատեսվում է առցանց հարթակի ակտիվության միջոցով մարդկանց ուշադրությունը սևեռել թատերարվեստի ոլորտի՝ տիկնիկային ժանրի վրա, ակնկալում ենք ունենալ մեծ քանակությամբ երեխաներ, որոնք առցանց կհետևեն հաղորդաշարերին: Նախագծի կրթական առանձնահատկության միջոցով տիկնիկային ժանրի գիտելիքների փոխանցում, խաղերի միջոցով ամրապնդում:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Իրականացվելու է 18 հաղորդում, ապահովելով 10.000 - 20.000 առցնանց դիտում: